Ավետիք Իսահակյան

Հոգիս մըռայլ էր մըրըրկի նըման

Հոգիս մըռայլ էր մըրըրկի նըման,
Եվ ծանր էր վիշտըս, և ես քուն մտա,
- Ինձ տանում էին դեպի կախաղան,
Եվ խոժոռ ճակտիս պըսակ տատասկյա:

Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես փըշրում էի սըրտերը մարդկանց.
Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես այրում էի սըրտերը մարդկանց:

Ինձ տանում էին դեպի կախաղան
Սըվինների տակ զինավառ զորքի.
Եվ հետևում էր ամբոխն ինձ անձայն,
Ամբոխը հոգու և նանիր խոսքի …
Ինձ բարձրացրին դեպի կախաղան
Եվ ճակտիս՝ ցնորք և վսեմ պսակ,
Ամբոխը սակայն թշվառ և ունայն
Խուռըն սողում էր իմ ոտների տակ …

1902

Ախալցխա